



ՊԱՐԳԵՎԸ ՇԱՀԲԱԶՅԱՆ

ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐԲԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՏԻ ՏԱՐԵԿԱՆ ՍՈՒՀՐԴՐԴԻ ՔԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՏԻ ՏԱՐԵԿԱՆ ՍՈՒՀՐԴՐԾԱՆԸ ՔԵՆՏՐՈՓԵՐԻՈՒՄ

Եկեղեցիների համաշխարհային խորհրդի կենտրոնական կոմիտեն իր տարեկան հրատարքանեն անցկացրեց Քենտրոնական սույն թվի օգոստոսի 18-ից մինչև 22-ը: Օգոստոսի 12-ի երեկոյան Քենտրոնական Սայր տաճարում տեղի ունեցավ հատաշրջանի բացման հանդիպակար արարողությունը, որին մասնակցում էին Եկեղեցիների համաշխարհային խորհրդի կենտրոնական կոմիտեի 120 անդամներ, տարբեր երկրներից ժամանած քրիստոնեական զանազան եկեղեցների հոգևոր և աշխարհական բազմաթիվ երկայացուցիչներ, խորհրդականներ, դիսորդներ, մամուլի և ռադիո-մեդիատառության աշխատակիցներ՝ թվով ընդամենը շուրջ 250 հոգի: Հայաստանաց առաքելական եկեղեցու կողմից ժողովին մասնակցում էին հոգեթերթ և Ներսես ծ. վրդ. Պողապալյանը՝ որպես կենտրոնական կոմիտեի անդամ, և Սայր Աթոռի միջնեկեղական արտաքին հարաբերությունների բաժնի քարտուղար Պարգև Շահբազյանը՝ որպես դիտորդ:

Բացման արարողության ընթացքում առաջինը ելույթ ունեցավ անգլիկան եկեղեցու արքեպիսկոպոս դոկտ. Միքայել Ռամենը, որը բարի գալուստ մաղթեց Եկումենիկ շարժման բոլոր եկեղական առաջնորդներին և ժողովի մասնակիցներին: Դիմելով տաճարում հավաքված բոլոր երկաներին՝ նա ասաց. «Եկեղեց է ժամանակը, երբ բոլորին համար

հրամայական անհրաժեշտություն է դառնում մեր բոլոր ազնիվ մտահոգություններն ու սուրբ իշեպելերը գործի վերածել»: Այսուհետև Անգլիայի արտաքին գործերի պետական քարտուղար լորդ Չեփոները անգլիական կառավարության և Նորին Մեծություն Անգլիայի թագուհու անունից բարի գալուստի մաղթաճները արեց բոլոր հյուրերին՝ լիակատար հաջողություններ ցանկանալով նրանց իրենց առաջիկա աշխատանքներուն: Ապա պատասխան ուղերձով հանդես եկան Խնդրնեզիայի և Անտիլյան երկրի երկայացուցիչները՝ կոչ անելով Քրիստոսի եկեղեցու բոլոր պատասխանակից աշխատանքներին ամենալորջ վերաբերմունք ցուց տալ ժամանակակից աշխարհի և հրա առաջադրած խնդրների հանդեպ և որոնել ու ջանալ երկրի վրա հաստատել արդարությունն ու խաղաղությունը հանուն «Հիսուս Քրիստոսի հավիտենական Ավետարանի»:

Օգոստոսի 18-ին տեղի ունեցավ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի կենտրոնական կոմիտեի 1969 թ. հատաշրջանի անդրանիկ հիսուր: Գլխավոր գեկուցումով առաջինը հանդես եկավ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի գլխավոր քարտուղար դոկտ. Բեյկը, որն իր զեկուցման մեջ առաջ քաշեց բնեուացում բարը, մի նոր համակաշրջանի վրանգները և միաժամանակ պատասխանական վարչությունը բնորոշելու համար մեր ժամանակաշրջանի վրանգները և միաժամանակ

հնարավորությունները՝ տնտեսական, քաղաքական և կրթական մակարդակների վրա: Նա ասաց, որ մեր ժամանակներում համաշխառական երևոյթ է գաղափարների, աշխարհայացքի, համոզունքների բնեղացումը աշխարհի զանազան մասերում, սակայն նա հույս հայտնեց, որ այդ բնեղացումը կարող է ավելի շատ դիմամիկ մի երևոյթ լինել, քան կործանարար, եթե մարդիկ աշխատեն ու գործակցեն փոխադարձ հարգանքի և քրիստոնեական սիրո զգացումներով: Ապա դոկտ. Բեկելը տվեց անցնող մեկ տարվա համաշխարհային քաղաքական իրադարձությունների ամփոփ բնութագիրը՝ դիտել տարով, որ փոքրիչատե զգալի ոչ մի մեղմացում տեղի չի ունեցել միջազգային քաղաքական կյանքում, որը կարելոր մի նապատ հանդիսանար խաղաղության գործին աշխարհի ամենալարված գոտիներում, ինչպիսիք են՝ Միջին Արևելքը, Վիետնամը, Հարավային Աֆրիկան և նիգերիան՝ հակառակ Եկեղեցների համաշխարհային խորհրդի կողմից գործադրված բազում շանքերին: Նա ընդգծեց, որ Եկեղեցների համաշխարհային խորհրդի գործունեության հիմնական ելակետն է եղել, ինչպես միշտ, քաղաքական բոլոր հարցերում պահպանել բացարձակ չեղորություն և անկողմնակալություն, միջազգային բոլոր կոնֆիլկտների լուծման համար աշխատել զուտ մարդասիրական և քրիստոնեական սկզբունքներից մղված:

Եկեղեցների համաշխարհային խորհրդի կյանքում անցնող տարվա ընթացքում որպես կորուր հադարձություն դոկտ. Բեկելն այնուհետև իր զեկուցման մեջ նշեց Պոլոս Զ Պապի այցելությունը Ժնևի Էկումնիկ կենտրոնին 1969 թ. հունիսի 10-ին: Այդ այցելությունը, —ասաց նա, —արտահայտում է Պապի մտադրությունը մի քայլ ևս առաջ գնալ Էկումնիզմի ուղղությամբ, որի համարքայն արել էր նրա նախորդ Հովհաննես Իգ Պապը և որը հետագայում շարունակեց Վատիկանի Բ ժողովը: Մենք ուրաք ենք, որ հումնական կաթոլիկ Եկեղեցներ հետզինեւ գիտակցում է անհրաժեշտությունը հստակ դիրքորոշման՝ առանց քողարկելու իր մտածումը դիմանագիտական զանազան բանական ձեւումների տակ:

Իր զեկուցման վերջում դոկտ. Բեկելը ցավ հայտնեց Հյուսիսային Խովանդիայում տեղի ունեցող տիսոր հադարձությունների կապակցությամբ՝ նշելով, որ Եկեղեցների համաշխարհային խորհրդի կամում կան անդամ Եկեղեցներ, որոնք իրենց կրթական մտածելակերպով նժրախառար դեռևս մեռում են միջնադարյան խավարաւասիան շղթաների մեջ:

Հետագա օրերի ընթացքում ժողովը լսեց Եկեղեցների համաշխարհային խորհրդի զանազան համաձայնաժողովների, կոմիտեների, Եկեղեցների առանձին բաժինների ղեկավարների տարեկան հաշվետու գեկուցումները իրենց գործունեության վերաբերյալ: Կենտրոնական կոմիտեի գործադրի խորհրդ նախագահ դոկտ. Ս. Թումասը (Հնդկաստան) «Մարդը և մարդկության զարգացումը ԵՀԽ-ի մտահոգությունների կենտրոնում» վերնագրով իր ընդարձակ գեկուցման մեջ նշեց, որ Ուփապահ համագումարի ընդունմած որոշումների հիման վրա խորհրդը իր աշխատանքային ծրագրի մեջ նկատի է առել պայքարը, որ Եկեղեցները պետք է մղեն չորս մակարդակների վրա: Այն է՝ պայքար հանուն աշխարհի զարգացման, ցեղային խորականության, միջազգային խաղաղության և մարդկության կրթության և դաստիարակության:

Կարդացված զեկուցումների հիման վրա, այնուհետև, տեղի ունեցան բանավեճեր, արվեցին որոշակի առաջարկություններ և հրապարակվեցին համապատասխան հայտարարություններ, որ ստորև ներկայացնում ենք ամփոփ կերպով:

Նիգերիայի վերաբերյալ հրապարակված հայտարարության մեջ ասկում է, որ ԵՀԽ-ն պատրաստակամություն է հայտնում ամենալայն չափով հնարավոր ամեն օգնություն ցույց տալ կուղոյ երկու կողմերի տուժվածներին՝ ամորելու համար նրանց ցավերը: Այդ ծանր տագնասի միակ հնարավոր լուծումը կոհիվների անհապաղ դադարեցումն է և բանակցությունների ձեռնարկելը: ԵՀԽ-ն իր հայտարարության մեջ ողջունում է բոլոր նրանց շահերը, ովքեր այդ ուղղությամբ օգտակար աշխատանք են տանում: Իր հերթին ԵՀԽ-ն ցանկություն է հայտնում իր աջակցությունը զգլանալ այն բոլոր կազմակերպություններին, որոնք դրա կարիքը կունենան՝ հարթելու համար այն խոր անհամանայնությունները, որոնք գոյություն ունեն երկու կողմերի միջև:

Կորպայի և Միացյալ Նահանգների միջև գոյություն ունեցող ոչ նորմալ հարաբերությունների կապակցությամբ ԵՀԽ-ն իր հայտարարության մեջ անհրաժեշտ է համարում, որ անհապաղ դիմանագիտական նորմալ հարաբերություններ վերահաստավեն այդ երկու պետությունների միջև, վերջ տրվի էմբարգոյին և առևտրական ազատ փոխանակությունները վերսկսեն իրավահավաքարության հիման վրա: Այդ կապակցությամբ խնդրում է անդամ Եկեղեցներին, ի մասնավորի Լատինական Ամերիկայի Եկեղեցներին, համապատասխան միջոցներ ձեռնարկել իրենց երկրների կառավարու-

թյունների մոտ՝ նրանցից պահանջելով անմիջապես վերահսկատել իրենց դիվանագիտական ու առևտրական հարաբերությունները Կուրայի հետ, որպեսզի մերժացվի այն տնտեսական ճնշումը, որից տառապում է Կուրայի ժղովուրդը այդ հարաբերությունների բացակայության հետևանքով:

Սիշին Արևելքի տագնապի կապակցությամբ կենտրոնական կոմիտեն ընդունեց հետևյալ որոշումը. «Ոչ մի կարու խաղաղության հիմարավոր չէ համեմ Մերձավոր Արևելքում առանց ներկայում այդ շրջանու ապրող պաշտամինցի և իրեա ժղովուրդների օրինական իրավունքների հարգման և առանց այդ շրջանի բոլոր ազգերի, այդ թվում և Խորաբեկի, հողային ամբողջականության և քաղաքական անկախության միջազգային երաշխավորման»: Հայտարարության մեջ շեշտվում է մասնավոր պատասխանատվությունը մեծ տերությունների, որնք պատճառ հանդիսացան քաղաքական այդ շրջանու, Կոչ է արվում մեծ տերություններին միջոցների ձեռնարկել՝ անհապաղ վերահսկատելու խաղաղությունը Անվտանգության խորհրդի 1967 թվի բանաձևի գործադրման հիման վրա: Եջև-ն պարտավորվում է շարունակելու իր աշխատանքը պատեստինցի գաղթականների ծանր դրությունը լուծելու ճանապարհին, գիտակեցելով, որ ինքը պարտականություն ունի համեմելու համեց կարիքներին և պաշտպանելու արդարության հրանց հիմնական և օրինական պահանջը:

Կենտրոնական կոմիտեի հիմներից մեկում ընթերցվեց Մուսկայի և համազն Ռուսաստանի պատրիարք Ալեքսիի համակը՝ ուղղված Եջև-ի անդամ բոլոր եկեղեցիներին, այն մասին, որ Հայութատանի արտաքին գործերի մինիստրությունը, որին դիմում էր արվել արտոնություն ստանալու համար, որպեսզի ուս 15 հոգևորականներ ուխտի գնան Աթոռ լեռան սուրբ Պատուելու մոնի ուսական վանքը, անհիմն կերպով կրծատել է ուխտավորների թիվը և մերժել է մուտքի վիզա տալ Նիկողոս միտրոպոլիտին, որը Եջև-ի կենտրոնական կոմիտեի անդամ է: Այդ կապակցությամբ ժողովը հրապարակեց մի հայտարարություն, որ Կոտսանենուալիս տիեզերական պատրիարք Աթենագորասը, որի հոգևոր իրավասության տակ է գտնվում այդ վանքը, լիակատար արտոնություն տվել է արդեն Աթոռ լեռան վանք ուխտավորացության համար և որ հոգևոր կարգի որևէ արգելք գոյություն չունի Եջև-ի անդամ եկեղեցիների կողմից: Դաշ վերաբերում է կառավարությունների կողմից հոգևորականներին ընդհանրապես վիզաներ տրվելու հարցին, դա նրանցից

յուրաքանչյուրի անհատական գործն է, սակայն այն դեպքում, — ասվում է՝ հայտարարության մեջ, — Եջև-ն պիտի ձգությունություն ուղևորվելու ամենալավ ազատությունը միջազգային չափանիշով, որպեսզի եկեղեցականներին թուլատրվի հասավանդելու իրենց քրիստոնեական և եկումենիկ գործությունները: Հայտարարության մեջ նշվում է, որ եկեղեցական կոմիտեն հունական կատալայության այդ արգելքի առթիվ որևէ վճարում է դիրքորոշում ընդունելուց առաջ կապահ այդ արգելքի պատճառների մասին Եվրոպայի խորհրդի առաջիկա մասնակիությունը:

Շահմազմբ արմատախիլ անելու վերաբերյալ կենտրոնական կոմիտեն մշակեց հինգ տարվա վրա տարածվող Եկումենիկ միջազգի, որն իր հիմնական գծերի մեջ հաստատվեց ժողովի մեծամասնության կողմից: Այդ առթիվ եղություն ունեցավ Հարավային Հայկատանի ներկայացուցիչ Չանդրան, որը հայտարարեց, թե հարկավոր է վերափոխել տնտեսական և քաղաքական այժմյան կառուցվածքները, որով միայն հիմարավոր կլինի հաստատել ցեղային արդարությունը:

Պրոֆ. Ռոժե Մեհիլը, Ստրավորգից, ընդգծեց ուսապական երևոյթի ոչ-բնական բնույթը և նրա դիվային չափերը: Կամերունի հոգևոր հովիլ Նիեսը կանգ առավ այն բանի վրա, որ ինքը ուսազմը ևս մի մեջ է, և որ հարկավոր է քրիստոնեաների մի նոր դար՝ այդ մեջից ազատագրվելու համար, քանի որ յուրաքանչյուր քրիստոնեայի ուղղում այս կամ այն կերպ դեռևս գոյություն ունեն ուսազմի մեացուները:

Անմուհեսուն կենտրոնական կոմիտեի 120 անդամները մեծամասնությամբ ընդունեցին 500.000 դոլարի մասնավոր մի ֆոնդ ստեղծելու առաջարկությունը՝ պայքարելու համար ճնշված ցեղերի տնտեսական, ընկերային և քաղաքական ազատագրության ի խնդիր, ի մասնավորի Աֆրիկայում, Հյուսիսային և Հարավային Ամերիկաներում, ինչպես նաև Արևմտյան Մվրոպայում և ամենուր որտեղ դրսուրդում է ցեղային խըրականությունը:

Ժողովը քննարկեց նաև Վատիկանի հետ Եջև-ի հայտարարությունների հարցը: Հռոմեական կաթոլիկ եկեղեցու կողմից սույն ժողովին որպես դիտող մասնակցում էին երկու եկեղեցացուցիչներ՝ հայր Մելիքան Շիլիկ, և հայր Էմմանուէլ Լանը՝ Հռոմից: Եր եղոյթում հայր Մելիքան ընդգծեց, որ կաթոլիկ եկեղեցին ցանկանում է գործակցել Եջև-ի հետ, քանի որ կոմիտենի շարժման մեջ նա տեսնում է սուրբ Հոգու միջամբությունը, որը կաթոլիկ եկեղեցուն ավե-

ի ու ավելի մղում է դեպի միությունը, և հենց դրանով է բացատրվում Վասիլաշի ներկայացուցիչների մասնակցությունը տրված ժողովին: Նա ավելացրեց, որ կաթողիկ եկեղեցու հնարավոր մուտքը Եջև-ի կազմի մեջ կարեր ու բորք մի գործ է և որ այժմ, հակառակ այդ ուղղությամբ կատարվող գգալի շամփերին, չի կարելի արդյունքի մասին որոշակի դատումներ անել, քանի որ այդ ճանապարհին առկա դժվարությունները դեռևս ենուու լուծված լինելուց: Այս կապակցությամբ կույց ունեցող բոլոր հոկտեմբերը միահամու ցանկություն և հույս հայտնեցին շուտով կաթողիկ եկեղեցու տեսնել Եկեղեցիների համաշխարհապի խորհրդի անդամ:

Կենտրոնական կոմիտեն իր ընդունած քանաձնում հաստատեց Եջև-ի և կաթողիկ եկեղեցու հարաբերությունների հարցն ուսումնասիրող խառն հանձնաժողովի որոշման այն մասին, որ հարկավոր է առաջին հերթին լայնորեն ուսումնասիրել կաթողիկ եկեղեցու՝ Եջև-ին հարելու հնարավորությունը և ոչ թե ստեղծել այլ կարգի ինչ-որ նոր մարմին՝ հետխացնելու համար այդ եկեղեցու հարումը:

Վիետնամի հարցում ժողովն ընդունեց հետևյալ որոշումը. բանակցող բոլոր կողմերի հետ սերտ շփում հաստատել և աշխատել, որ կողմերը համատրեն շարունակեն ուժեղացնել իրենց շամփերը հաշուության հասնելու համար: Որոշվեց, որ ներկայացնում քիաստենական կողմերի ուժադրությունը ուղղված պետք է լինի Վիետնամի երկու կողմերի տուժվածներին օժանդակություն ցուցաբերելու վրա, և այդ օժան-

դակությունը հետզհետեւ պետք է մեծանա և վերածի այդ տառապած ու ծվատված երկրի ընդհանուր վերակառուցման համար օգնության ընդարձակ մի ծրագրի, հենց որ պատերազմը դադարի:

Ծողովը քննության առավ նաև հինգ նոր եկեղեցիների դիմումները Եջև-ին անդամակցելու համար: Այդ եկեղեցիներն են՝ Կոնգոյի Կինշասայի կիմբանգիստ եկեղեցին, Բրազիլիայի ավետարանական եկեղեցին, Լեհաստանի հին-կաթողիկական մարիավիա եկեղեցին, Խորհնեզիայի Կարո Բատակ բողոքական եկեղեցին և Զամայկայի մորավ եկեղեցին: Ցուրաքանչյուրը 10.000 անդամ ունեցող երկու այլ եկեղեցիներ՝ Արգենտինայի միացյալ լութերական-ավետարանական եկեղեցին և Լիբերիայի պրեսբիտերական եկեղեցին առաջարել էին իրենց թեկնածությունը հասնալու Եջև-ի գործակից եկեղեցիներ: Կենտրոնական կոմիտեն ընդունեց այդ թեկնածությունները ձայների մեծամասնությամբ: Սակայն կենտրոնական կոմիտեի որոշումը, ըստ կանոնադրության՝ վերջնական չէ: Հարկավոր է, որ անդամ բոլոր եկեղեցիները հայտնեն իրենց կարծիքը հետագա և ամսների ընթացքում, և եթե հրանցից ավելի քան մեկ երրորդը առակություն չունենա, դիմումները կհայտարարվեն ընդունված: Շատ հավանաբար 1970 թ. Եջև-ի կունենա 229 անդամ եկեղեցիներ և 13 գործակից եկեղեցիներ:

Եջև-ի կենտրոնական կոմիտեի սովորությունը օգտագործ 22-ին ավարտեց իր աշխատանքները, և որոշվեց հաշորդ հատաշրջան անցկացնել 1970 թվի վերջերին Ադիս-Աբենայում:

